

որուն եղանակը կը պահեն անփոփոխ իրենց կարգը: Հայ այն մասնիկները, որոնք կը ներկայացրնեն յոյն *γάρ, γε, ἄε, μέν* եւ *τε* մասնիկները, կը գրուին միշտ նախադասութեան սկիզբը եւ երբեք հետեւաբար չեն կարող անջատել նախադասութիւնն իր խնդրէն: Վերջապէս հայ թարգմանիչը կը սիրէ կրկնել «ընդ», «ընդ», «ի» (յ) եւ «ց» նախադասութիւնները ոչ միայն «եւ» ով զօրուած գոյականներու առջեւ՝ «եթէ» ոք... ոչ ատեայ զհայր իւր եւ զմայր եւ զկին եւ զորդիս եւ զեղբարս եւ զքորս, նա եւ զանձն եւս իւր», Ղուկ. ԺԴ. 26, «ընդ ընդ քաղաքս եւ ընդ գիւղս», Ղուկ. ԺԴ. 22, *κατὰ πόλεις καὶ κώμας*, «մասնեւ չեք եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յաղբականաց եւ ի բարեկամաց», Ղուկ. ԺԴ. 3, *ὑπὸ γονέων καὶ ἀδελφῶν καὶ συγγενῶν καὶ φίλων*, «ասէ ցաւրինաւորան եւ ցփարեւեցիսն», Ղուկ. ԺԴ. 3, *πρὸς τοῖς νομικοῦς καὶ φαρισαίοις*, այլ նաեւ գոյականն յատկորոշող բառերուն՝ յատկացուցչին եւ յետադաս ցուցականին առջեւ՝ «էջ ի կափանաւում ի քաղաքն դալիլեացոց», Ղուկ. Գ. 31, *εἰς Καφαρναοὺν πόλιν τῆς Γαλιλαίας*, «եղեւ ընդ աւուրան ընդ այնսիկ», Ղուկ. Բ. 1, *ἐν ταῖς ἡμέραις ἐκεῖναις*, «ամենայն որ ընդհարցի ընդ վէմն ընդ այս խորաակեցի», Ղուկ. Ի. 18, *ἐπ' ἐκεῖνον τὸν λίθον*. Նախադասութեան կրկնում կը նշմարուի նաեւ այն պարագային երբ գոյականին կը նախադասութիւնները մը՝ «ասէ... ցեկեալն ի վերայ նորա ցքահանայութեան», Ղուկ. ԻԲ. 53, *πρὸς τοὺς παραγενομένους ἐπ' αὐτὸν ἀρχιερεῖς եւ կամ «ամենայն» ածականը՝ «յամենայն ի փառսն իւր», Ղուկ. ԺԲ. 27, *ἐν πάσῃ τῇ δόξῃ*, երեւոյթ, որ յատուկ է հնդեւրոպական լեզուներու կը շեշտէ Cuendet.*

Եզրակացութիւն: — Բնագիրը հաստատութեան ներկայացրնելու ձգտումով հայ թարգմանիչը ընդհանրապէս կը պահէ յոյն բառակարգը, աւանց զգալիօրէն զըր-

ժելու իր լեզուի քերականութեան, քանի որ անուանախումբի կազմածը զրեթէ նոյն է երկու լեզուներու համար ալ:

Երբեմն սակայն բառակարգը կը փրկուի քերականական համաձայնութեան զգալի փոփոխութեամբ:

Թարգմանիչը յարգելու համար իր լեզուին անյեղի օրէնքները, չի կասիր բնանախադարձփարին բառակարգը եղանակաւորելէ. ունի նախասիրութիւններ, զորոնք ստէպ կ'արտայայտէ:

Անջատումը աւելի յաճախ է յոյն բնագրին ու գրթ. թարգմանութեան մէջ, քան սլաւ եւ մասնաւորապէս հայ թարգմանութիւններու մէջ:

Թարգմանիչն արտայայտած ձգտումները կան, աւելի սլայժառ գծերով, հայ դասական մատենագրութեան մէջ, ու այժմ ձգտումները կը բարձրանան յաճախ մինչեւ հնդեւրոպական լեզուն:

Հ. Ա. ՎԱՐԴԱՆԾԱՆ



ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ՈՂՐԸ ՂԵՒՈՒՓ ԵՐԷՑԻ ՊԸՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԱՐԱՆՆ Ե

1. Մովսէս Խորենացոյ «Հայոց Պատմութեան»¹ վերջաբանութիւնը կը կազմէ ԿԸ. գլուխը, որ կը կրէ այսպիսի խորագիր՝ «Ողբ վասն բառնաւոյ թաղաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց, եւ եպիսկոպոսութեանն յազգէ սրբոյն Գրիգորի»:

«Հայոց Պատմութեան» ծանօթ գրեթէ բոլոր ձեռագիրներն ունին այս գլուխը. կը պակսի միայն երկու օրինակի մէջ (cf), առաջինը (c) գրուած է 1691ին. իսկ երկրորդը (f) անթուական է, բայց նոտագիրը զըջութեամբ², ուստի մերձաւորապէս նոյն ժԸ. դարէն: Կը գտնուի նաեւ ինքնակայ՝ ձառնարկներու եւ Յայտաւորութեան մէջ,

¹ Մովսէս Խորենացոյ Պատմութիւն Հայոց [հրատարակեալ] աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան. Տիփլիս 1913, էջ 358—366:
² Հմմտ. անդ, էջ ԺԴ—ԺԵ:

աննշանակ յաւելուածներով ճոխացած, մասնաւորապէս ի կատարածին³:

Թէ Ողբս Ժ. դարուն արդէն մասն կը կազմէր «Հայոց Պատմութեան», չի կրնար կասկածի ենթարկուիլ. Յովհաննէս Դրասխանակերտցի կարգացած էր զայն⁴:

2. Ողբիս թէեւ ուշադրութիւն դարձուցած էր բանասիրութիւնը, բայց ուսումնասիրած էր զայն առաւելապէս աղբիւրներու տեսակէտէ: Ոչ ոք չէ քննած զայն հարազատութեան եւ «Հայոց Պատմութեան» հետ ունեցած ներքին աղբիւրի տեսակէտներէն. հարագա՞տ է Ողբս «Հայոց Պատմութեան» հեղինակին, ունի՞ր բովանդակութեամբը աղբիւրս «Հայոց Պատմութեան» հետ. եւ վերջապէս կը պատշաճը՞ այն իւր նկարագրողը եւ որպիսութեամբը Յ. դարու այն ժամանակակէտին, ուր աւարտած է «Հայոց Պատմութիւնը»:

Այս հարցումներու քննութիւնը պիտի առաջնորդէ մեզ որոշելու Ողբիս գրութեան ժամանակը եւ հեղինակը⁵:

«Հայոց Պատմութեան» վերջնութիւնը գլուխը (Գ. 67) կ'աւարտէր այսպիսի պատկերով. Սահակ եւ Մաշտոց շրջապատուած իրենց աշակերտներէն կը կնքեն իրենց մահահանցուն խաղաղութեամբ (439 եւ 440): «Եւ ցրուեալ աշակերտաց նորա (Սահակայ)՝ կրօնաւորաց սպուղէից ի գաւառս իւրաքանչիւր՝ շինեցին վանօրայս, ժողովեալ եղբարս»: Մաշտոցի մահէն յետոյ «զաթոռ եպիսկոպոսութեան ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտն Յովսէփ քահանայ ի Վայոց ձորոյ, ի Սողոմոն գեղջէ»: — «Աւարտեցան զիրք երրորդ յանկ ելանելոյ Պատմութեան Հայոց մեծաց»:

Դարուն առաջին կէսը պատկերիս մէջ կը ներկայանայ սքանչելի հրապոյրով. Մեծ ուսուցիչներու ընտիր աշակերտները բար-

³ Հմմտ. անդ, էջ 358, ծան. 7 եւ էջ 366, ծան.: Պատահած եմ նաեւ էջմիածնի ձառնարկ-ժողովածուներու մէջ:

⁴ Հմմտ. էջ 58, 22—23, 110, 4—8 (այդ. Տիփլիս, 1912). Ասողիկ, 77 (հրատարակեալ). Գր. Մաքսարոս, Թուղթք, էջ 55 (հրատարակեալ):

⁵ Գր. Халатъянцъ, Армянскіе Аршакиды въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго. Москва 1903, Մասն Ա, էջ 368—369 եւ Բ. 140—143:

⁶ Տես առ այս՝ Հ. Ն. Ա. Կ. Ի. Ն. Կ. Ն. Մովսէս Խորենացոյ ժամանակն եւ անձնաւորութիւնը. Ա. Ն. Տ. Ի. Ն. Նոր շրջան, Ա. տարի (1929), Ժ. 4, էջ 67—77: Ինչ որ փորձած էի հոն համառոտ տողերու մէջ ներկայացնել, այժմ կու գամ մանր քննութեամբ ուսումնասիրել:

գաւաճ գործունէութեան մէջ են. կղերը զարգացած է աւելի քան երբեք՝ անկէ յառաջ եւ ետքը. Աղբիւն եւ Եկեղեցւոյն հովանին եւ առաջնորդն է տեղապահութեամբ Յովսէփ քահանայ, մին Մեծ Ուսուցիչներու ձեռնասուններէն: Նորակառոյց վանքերը լի են սրբակեաց կրօնաւորներով: Երկրին սպարապետութիւնը Վարդան Մամիկոնեանի ձեռքն է, որ իր շուրջը հաշտ ունի նախարարակոյտ աղատանին: Պարսկական բռնութիւնները դեռ չեն ծանրացած ազատութեան եւ ուսման վրայ:

Ի՞նչ շարժառիթ ունէր Մ. Խորենացի ողբալու այսպիսի բարեկարգ դարագլուխ մը:

Ողբը պիտի պատշաճէր տեղւոյն եւ ժամանակին, եթէ Մովսէս նախընթաց գլուխներուն մէջ ակնարկած ըլլար քաղաքական կեանքի բարդութիւններուն, քաղաքակրթական կենցաղի անկումին, ժողովրդական տնտեսութեան քայքայումին, դաժան բռնապետներու խիստ հարկապահանջութիւններուն մասին. բայց չկան հոն այդպիսի ակնարկութիւններ: Եթէ «Հայոց Պատմութիւնը» շօշափած ըլլար 440ին յաջորդող քառամսեայ շրջանին դէպքերը, թերեւս առիթ ունենար Մովսէս թափելու արտասուք, բայց այս շրջանը նիւթ չէ եղած «Հայոց Պատմութեան»:

Այսպիսի հանգամանքներու մէջ Ողբս «Հայոց Պատմութեան» վերջը՝ անյարիր է տեղւոյն, ժամանակին եւ պարագաներուն:

«Հայոց Պատմութեան» այժմեան ձեւի մէջ կը սպասուէր հեղինակէն ուրիշ վերջաբանութիւն: Մովսէս ձեռնարկած էր աշխատութեան Բագրատունի իշխանի մը հարկեցուցիչ հրամանով. եւ գլուխ հանած էր զայն ամենայն աճապարանօք: Ինչպէս սովոր էր գործին սկզբնաւորութեան մէջ եւ յընթացս պատմութեան յաճախ անգամներ շրջել իւր խօսքը Պաշտպանին, նոյնպէս ի կատարածին կը սպասուէր բնականաբար, որ շուրջը գրուատիքներ անոր հասցէին եւ յայտնէր իւր խոնարհարար յանձնառութեան բարեւակատարումը: Այսպիսի աւարտաբանութիւն կը բացակայէ այժմ «Հայոց Պատմութեան» վերջը: Անոր տեղը չէ կարող բռնել Ողբս, ուր բովանդակ Հայաստանն է լացի առարկայ, եւ կսկիծը կ'ամփոփուի «հովուի եւ հովուակցի» շուրջը. իսկ Բագրատունի իշխանին մասին չկայ բառ մ'անգամ: Ընդհակառակը «Չորականք անարիք... իշխանք

ապստամբք, գողակիցք գողոց...» կը ներկայացուին: Մեծազգի իշխան մը, որ ապստամբներու գլուխն անցած էր, նախատինք միայն պիտի հնձէր հոն եւ ոչ փառք իւր անուան եւ տոհմին:

Նաեւ այս տեսակէտով Ողբս անմիարան է ժամանակին, եւ անպատշաճ տեղւոյն:

Բայց եւ այնպէս որոնք բարի հաւատքով մերձեցած են Ողբիս եւ համարած են զայն անբաժին մասը «Հայոց Պատմութեան», նկատուած են հոն Ե. դարու առաջին կէսի պատկերին ցոլացումը՝ Մահակի եւ Մաշտոցի եւ անոնց հակաթոռ կաթողիկոսներու դէմքերը. տեսած են նաեւ 440—480 շրջանի դէպքերու մասին մարզաբէական ակնարկութիւններ: Ես պիտի չուզեմ հոս անոնց հետ վիճել: Իմ եւ անոնց ըմբռնումները Ե. դարու առաջին կէսի եկեղեցական դիպուածներու մասին բազմօք կը տարբերին: Այդ դասական շրջանին համար ես միակ հովուապետ կը ճանչնամ Հայաստանեայց Եկեղեցւոյ գլուխը յանձին Մահակոյ, մերժելով բոլոր օտարչուրթն հակառակաթոռները իբրեւ եղջերուաքաղներ: Տեղս չի ներեր ինձ աւելի տարածուել այս խնդիրներու շուրջը, որոնք կը պատկանին Ե. դարու պատմութեան եւ ոչ Մ. Խորենացւոյ Ողբին ուսումնասիրութեան:

3. Ողբս գրուած է զգայուն գրչէ մը: Այն հիւսուած չէ պարզ երեւակայութեամբ. արդեւնքը չէ յոռետես մտքի մը, այլ անօրթելադրիչը եղած է այնպիսի դաժան ժամանակ մը, որ աուլցուն էր աղիողորմ տեսարաններով, հեծեծանքներով, անտեսական կեանքի թշուառութիւններով, համաշխարհական աղէտներով: Ոչ թէ քաղաք մը կամ գիւղ մը առարկայ է Ողբին, այլ բովանդակ «Հայոց աշխարհը»: Եթէ մանր տարրալուծենք Ողբին կազմիչ մասերը, հետեւալ տարրերը պիտի ստանանք հոն.

ա. Հայաստանեայց Եկեղեցւոյ հովուազուրկ դրութիւնը:

բ. Հովուին եւ Հովուակցին մահուամբ որբացած ողբերգութիւն սրտի թախիծը:

7 Կ. Յ. Պատմեան, Բնութիւն Ողբոյն Մովսիս Խորենացւոյ, Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 382—384, կը փանայ ապացուցանել թէ Ողբիս գրութեան տարին է 440, յօրինուած անկախ Հայոց Պատմութենէն. յետ ժամանակաց միայն կցուած արարչը Բնագանդացի, Գննասէր, Այսպէս նաեւ Նոյն էջ 21. «Ողբ Խորենացւոյն երեւին գրեալ նախ քան զՊատերազմն վարդանանց»:

գ. Եկեղեցական եւ աշխարհական դասակարգերու բարոյալքումը:

դ. Բնութեան արհաւիրքները, որոնք կը հարուածեն Երկիրը:

ե. Քաղաքական կեանքի մրրկայոյց պայմանները, անդադար պատերազմները, ասոր հետեւութեամբ արիւնհեղութիւնը, աւերածութիւնը, սովը եւ հիւանդութիւնները եւ «մահք բազմօրինակը»:

Ընդարձակ տեղ կը դրուեն առաջին եւ երկրորդ կէտերը, որոնք սերտօրէն կապուած են իրարու հետ եւ ընդհանուր պատկերէ աւելի Ողբերգութիւն ներաշխարհն ունին կախիծի առարկայ: Այս տեղ Ողբասացը նկատի ունի Հովիւ մը եւ Հովուակից մը. վախճանած են եւ մին եւ միւրը: Առաջինը իրեն հայրն եղած է, երկրորդը պաշտպանը. հօրը կողմանէ ուղարկուած է անձանօթ ուղղութեամբ (յաւելուածաբար ցոյց կը տրուի Բիւզանդիոն) բարձրագոյն կրթութիւն մ'առնելու. բայց վերադարձին գտած է դանդաղ վախճանած. մինչ իւր մխիթարութիւնն երկրորդին հովանւոյն տակ յուսացած է գտնել, կորսնցուցած է նաեւ պաշտպանը: Ոչ հովուին եւ ոչ հովուակցին անունը կը յիշէ յականէ:

Ժամանակի աղէտը կը կայանայ յայնմ որ բարոյական կարգերը խանգարուած են ամենուրեք. եկեղեցականութիւնը թուլացած է իւր կարգերուն մէջ, կ'ապրի սանձարձակ, ուսման սէրը նուազած է. անարժան պաշտօնեաներ կը հովուեն ժողովուրդը: Զօրականները անարի են, դասալիք, իշխանները ընչաքաղց, դասաւորները անարդար, թագաւորները անգուլթ: Ասոր հետեւութիւնն է աստուածասատ բարկութիւնը, բնութեան խտուրթիւնը, արհաւիրքները, անդադար պատերազմները, ծանր տուրքերն եւ հարկապահանջութիւնները, սովը, հիւանդութիւնը եւ համաճարակ մահը:

4. Ժամանակի նկատմամբ ելակէտ մը գտնելու համար ոտից կուտան պիտի ծառայեն մեզի բնութեան արհաւիրքներու մասին հաղորդուած մանրամասնութիւնները: Ասոնք ամփոփուած են հետեւեալ սողերու մէջ (364, 21—365, 6).

«Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ անտես ատեն Աստուծոյ, եւ տարերց փոփոխել զընուրթիւնս իւրեանց: Գարուն երաշտացեալ, ամառն անձրեայոյց, աշուն ամեռնացեալ, ամեռն սաստկասառոյց,

մրրկալից, յերկարեալ, հողմք բխարաբ, խորշակաբերք, խոտախաւաք, ամպք հրընկէցք, կարկառուք, անձրեւք անժամանակի եւ անպիտանք. օդք դառնաշունչք, եղեմնարկուք. ցրոց առաւելուլն անօգուտ եւ նուազելն անհնարաւորք. երկրի անքերութիւնք պաղոց եւ անանխութիւնք կենդանեաց. այլ եւ սասանմունք եւ դրոյմունք: Եւ ի վերայ այս ամենայնի խոռովութիւնք յամենայն կողմանց... սովք անբաւք եւ հիւանդութիւնք եւ վախք բազմօրինակք. աստուածապաշտութիւն մոռացեալ եւ ակնկալութիւն գեհեմի»:

Այս արհաւիրքները բնութեան մէջ յաճախ կրկնուած երեւոյթներէն չեն երեւար. անոնք իրենց սաստկութեան մէջ հիւսիսային ուժեղ քամիներէն պատճառած այն հաղուաղէպ հողմացոյցներն կ'ակնարկեն, որոնք երբեմն երբեմն շրջան կ'ընեն երկիրներու վրայէն եւ կը գործեն հոս եւ հոն անհազին աղէտներ: Ասոնց ապականիչ աղբացութիւնը չէր կարող սահմանափակուած ըլլալ որոշ սահմանի մէջ: Ուստի ինչ որ տեսած էր Հայաստան, նոյնը զգացուած պիտի ըլլար նաեւ սահմանակից աշխարհներու մէջ: Այս պատճառաւ ալ գործուած փաստներու եւ յառաջացած սարսափի արձագանգը կրնանք յուսալ լսել նաեւ արտաքին ժամանակագիրներու քով:

Սաստկութեամբն եւ պատճառած փաստներովն ասոնց շատ նման կ'երեւան այն օղբերութեամբանական դիպուածները, բնութեան արհաւիրքները, որոնք տեղի ունեցան Ը. դարու երկրորդ կէսին, յատկապէս 772—773 տարիներուն Ասորական Միջագետք: Այս մասին երկարաշունչ սողերով տեղեկութիւններ հաղորդած է Ստոյն-Դիոնեսիոսի Թեւ-Մահարացւոյ Ժամանակագրութիւնը՝ գրուած ականատեսէ մը: Կարեւոր կը համարիմ անձանօթ. ժամանակագրին մանրապատում նկարագրութիւնը ներկայացնել համառօտ գծերով, զիւրացնելու համար համեմատութիւնը Ողբիս սողերուն հետ: Քաղուածքներս կը սկսին 60ական թուականի դիպուածներէն:

«1074 (762/63) աղար (մարտ) ամսին Տիրիս չափազանց յորդեց, այնպէս որ սահ-

* Chronique de Denys de Tell-Mahré: Quatrième partie, publiée et traduite par J.-B. Chabot. Paris 1895. Բնագիրը վերջին մասերու մէջ թղթերու անկում կրելով, սկստաւոր է:

մանադաւառը քանդեց, բոլոր եղբրքին պատճառեց մեծ փրատներ, տարաւ իրեն հետ տուներ, ջրաղացներ, դիւղեր, մարդիկ, անասուններ այլովքն հանդերձ: Ահաւոր աւերածներ գործեց Մուսուլ... նոյնպիսի փրատներ գործեց նաեւ գաւառիս բոլոր վերնահողմերը» (էջ 71/72). հմմտ. առ այս. «Ջրոց առաւելուլն անօգուտ եւ նուազելն անհնարաւորք»):

«Այս տարի բոլոր ընտանի անասունները, մասնաւորապէս փոքր կենդանիները կոտորուեցան: Առատ եւ խիտ ձիւն մը ծածկեց երկիրը եւ այնքան երկար կեցաւ, որ բոլոր կենդանիները անօթութենէն սպանեցան: Տեղի ունեցան նաեւ անթիւ արկածներ. տեղիս տեղիս ձիւնը յեղակարծունն իջնալով հովիւները յանկարծակիի բերաւ. եւ այսպէս հօտն ալ հովիւներն ալ կոտորուեցան ի միասին: Բաց ասկից քամին հիւսիսէն եւ արեւելքէն ձիւնախառն փչելով երեք օր եւ երեք գիշեր սաստկութեամբ՝ կոտորեց շատ մարդիկ եւ ընտանի անասուններ, յատկապէս փոքր կենդանիներ: Բազմաթիւ մարդիկ ճանապարհին ձիւնէ բռնուելով մեռան, իրենք եւ իրենց գրաստները» (էջ 95):

772/73. «Անձրեւը որ ձմեռը սովորաբար կը տեղար, մնաց երկնքի վրայ. այնպէս որ ամենեւին խոնաւութիւն չեղաւ: Այս պատճառաւ (գարնան) ցանքերը չբուսան. եւ ինչ որ բուսաւ, չորացաւ. այսպէս եղաւ մանաւանդ հարաւային եւ արեւելեան կողմերը: Եւ բովանդակ անապատի մէջ: Բացի լեռներու հովիտներուն մէջ եղած քիչ մը բանէն ուրիշ ոչինչ չյաջողեցաւ: Մարդիկ թափօրներ կազմեցին երկինքը հաշտեցնելու համար: Եւ որովհետեւ երկինքը փակուած մնաց՝ ցորեն ունեցողները հրապարակ չհանեցին իրենց ցորենները: Եւ այսպէս աղքատները սովի մատնուեցան: Հարուածը խոտացաւ ամէնէն աւելի Մուսուլ, Արեւելք եւ Հարաւ...» (էջ 145—186. հմմտ. առ այս. «Գարուն երաշտացեալ»):

1085 (= 773/74). Գրուած է. Ձեր ամառը պիտի փոխեմ ձմեռուան: Այս իրօք ալ կատարուեցաւ այս տարի: Այս տարի խաղողի բերքը առատ էր... Բայց ձմեռը սկսաւ առաջին թշրին ամսէն (հոկտեմբեր). եւ առատ ձիւն իջաւ այգեստաններու եւ խաղողներու վրայ: Երկար նստաւ: Թէպէտ ձիւնը ծածկած էր ամէն ինչ, բայց մշակները մտան այգին խաղող կթելու համար:

Սաստիկ ցրտութեան պատճառաւ բոլոր հաս-
տիկները դեռին փրուած էին եւ ձիւնի տակ
կ'ապականէին: Յուրան եւ ձիւնը կը խտտա-
նար օրէ օր, առաջին թշրին ամսէն (հոկտ.)
մինչեւ խաղիւրան (յունիս) ամիսը ամենեւին
չանձրեւեց. այս բովանդակ տեւողութեան
օր մը կը ձիւնէր եւ օր մը խտտաչունչ կը
փչէր. այնպէս որ լեռները սառնամանիքէն
եւ սաստիկ ցուրտէն կարծես թէ կը պատա-
ռէին... (էջ 159/60. հմմտ. առ այս. «աչուն
ձմեռնացեալ. ձմեռն սաստկասառոց, մրբը-
կալից, յերկարեալ, հողմք բբարարք...»):

Ինչպէս վերադոյն յիշեցինք, տեղի ու-
նեցաւ սաստիկ չորութիւն. խոտի պակասու-
թեան պատճառաւ կոտորուեցան բոլոր ա-
նասունները... (էջ 160):

Դարձեալ սաստիկ եւ դանաչունչ քա-
միններ եղան. որպիսիք մեր եւ մեր հայերբու
օրով չէին պատահած: Այս քամիներու հե-
տեւութեամբ բոլոր մանր եւ մեծ կենդանի-
ները, թռչունները կոտորուեցան. շատ
արմատիք արմատով միասին փճացան: Փոշին
ուրապոտոյտ կը բարձրանար երկրէս այն
բուքերու նման, որոնք կը կաղմուէին ձիւնէն:
Այս հողմայոյցները մասնաւորապէս սաստիկ
էին Մնդեան եւ Յայտնութեան տօներու մէջ
երկու օր, եւ ապա չեբաթ (փետր.) ամսի
13ին, Մաղկադարդին եւ Աւագ Երկուշարթի
(էջ 160—161. հմմտ. «հողմք բբարարք»):

Այս տարի այնպիսի կարկուտ մ'եկաւ,
որ նմանը տեսնուած չէր մեր օրերուն: Կար-
կուտի հատիկները կայծքարի մեծութեամբ
էին եւ բաղձազան ձեւերով. երկանկիւնի,
եռանկիւնի, քառանկիւնի, սուրի պէս սրա-
ծայր: Սորտակեց ծառերն եւ որթատունկ-
ները. արմատախիլ ըրաւ արմատիքը, փլցուց
տներու երդիքները: Անհամար աւերներ գոր-
ծեց այս կարկուտը, այնու որ միաժամանակ
հողմայոյց մըրիկներ տեղի ունեցան: Մինչ
քամին ձիւնը ամպի նման կը քչէր կը տա-
նէր, մի եւ նոյն ժամանակ երկրէս կը վե-
րամբառնար ջուրն եւ կը նետէր երկնքէն
իջած ձիւնին դէմ, այնպէս որ տեսնողները
կը կարծէին թէ երկիրն ինքնին կը բարձրաց-
նէր դանոնք եւ ուղղակի երկնքի երեսին կը
չլրատէր (էջ 161. հմմտ. «ամպք հրենկէցք,
կարկուտաւք...»):

«Թէ ինչպէս սովը սաստկացաւ մարդկան
վրայ. յառաջ եկաւ դաժան հիւանդութիւնը
եւ մեծ ժանտախտը»: Այս գլուխը (էջ 176—
188) կու տայ մանրամասն նկարագրութիւն

մը 773/74 տարւոյն մեծ սովին եւ ասիէ ծա-
ղած համաճարակ հիւանդութիւններու եւ
մեծ ժանտամահին: Սրտածմլիկ է տեսա-
րանը եւ ահաւոր աղէտը. ինչ որ մեր Ող-
բերգուն հինգ բառով կ'ողբայ. «սովք ան-
բաւք եւ հիւանդութիւնք եւ մահք բազմօրի-
նակք», ասորի ժամանակագիրը 12 երեսը
դեռ քիչ կը գտնէ նոյնը ճշգրիտ պատկերե-
լու համար: Նա յանուանէ կը թուէ հիւան-
դութեանց տեսակները եւ ասոնց հետեւու-
թեամբ մարդկան բազմօրինակ մահերը:
Աւելորդ կը համարիմ յառաջ բերել այս ա-
ղէտարչ տողերը:

Դիոնեսիոս Թել-Մահրացւոյ այս տո-
ղերը կը կրկնէ հակիրճ ձեւի մէջ Միքայէլ
Ասորի⁹: Սօսելով սովի եւ համաճարակ
հիւանդութիւններու մասին կը գրէ ասորի
պատրիարքը (յամն 1083 = 771/72).

«...այսպիսի պայմաններու մէջ աղէտը
կը ծանրանար. ծագեցաւ ահաւոր հիւան-
դութիւն մը, որ կը վարակէր մարդկան
գլուխն եւ արագ կը զգեսնէր: Ասորիք, Մի-
ջաղետք եւ Ասորեստան վարակուեցան այս
հիւանդութեամբ» (Բ. էջ 526):

«Սովը կը տանջէր ոչ այնքան ալիւրի
նուազութեան պատճառաւ, որքան անոր
համար որ ոչ մէկուն քով զուգա (դրամ)
չկար եւ աղքատներուն համար աշխատու-
թիւն. որովհետեւ եկեղեցիներն եւ վանքերը
կապուած էին եւ տունները կողոպտուած:
եղ մը կամ էջ մը կ'արժէր մէկ զուգա. հինգ
մօթ ալիւրը կը վաճառուէր մէկ զուգայի.
10 լիտր գինեղ պինն էր 1 զուգա, երկուս-
սարդ մանչերն եւ աղջիկները կը վաճա-
ռուէին 5 զուգայի»: «Աղէտը տեւից երեք
տարի մինչեւ Տաճիկներու թաղաւորին՝
Աբու-Ջաֆարի մահը, որ այս չարիքին պատ-
ճառն էր» (Բ. էջ 526—527):

Բնութեան արհաւիրքներու մասին կը
գրէ Միքայէլ (Բ. 524). 1073ին (իմա
1083ին = 773) նաեւ կարկուտ եկաւ, որ
ապականեց հունձքերու մեծ մասը. անոնք
որ չափեցին կարկուտի հատիկները, ըսին
թէ ութ լիտր էր¹⁰:

⁹ Chronique de Michel le syrien, t. II, Paris
1904 (ed. J.-B. Chabot).
¹⁰ Միքայէլի հայերէն հին թարգմանութիւնը
այս տեղիքները այսպէս կը համառուէ (տպ. երու-
սագէժ, 1870, էջ 356—357).
«Յարուժ աւուրս (յաւուրս Աբու Ջաֆարի)
եղեն նշանք մեծամեծք ի սկիզբն մարտի ամսեան
մինչեւ ցեյտն ապրիլի. օղբ փոշի տեղեաց, եւ տիւն
գիւնք կարծէր... եւ գինի նորա եղեւ շարժ սաստիկ

Միքայէլ կը յիշէ նաեւ թէ այս շրջանին
երկու մեծ երկրաշարժ պատահած է. առա-
ջինը 1076ին (764/65) Սորասանի մէջ, որուն
սաստիկութենէն լեռ մը կը փլի (Բ. 524).
Երկրորդը տեղի կ'ունենայ 1080ին (=768/69).
«սաստիկ երկրաշարժ եղաւ» (անդ): Երկրա-
շարժ մըն ալ կը յիշէ Սուրն Դիոնեսիոս
Թել-Մահրեցի, պատահած 755ին Միջա-
դեաքի մէջ (էջ 63):

Ժամանակի այս աղէտները ծանօթ են
նաեւ Ղեւոնդ երէցին, որ այսպէս կ'արձա-
նագրէ իւր Պատմութեան մէջ. «...բազ-
մութիւն մարախոյ¹¹ եւ կարկուտք եւ երաշ-
տուքիւնք անձրեաց» (136). «սով եւ սուր
(իմա՝ ժանտամահ) եւ սասանութիւն յա-
ճախէր» (137):

Այս համեմատութիւնները բաւական են
արդէն, մատնացոյց ընելու համար Ողբի
գրութեան տարին՝ 773—774:

5. Փորձենք այժմ ստացուած արդիւնքի
ստուգութիւնը Երկրին քաղաքական եւ
անտեսական պայմաններու զննութեամբ:

Ողբասացը կը շարունակէ իւր խօսքերը
(365, 7—10).

«Եւ ի վերայ այս ամենայնի խոսվու-
թիւնք յամենայն կողմանց¹², ըստ այնմ եթէ
չիք խաղաղութիւն ամբարշտաց: Ձի թա-
ղաւորք տիրեալք խիստք եւ չարաչարք,
բեռինս բառնալով ծանուես եւ դժուարա-
կիրս, հրամանս տալով անտանելիս. վերա-
կացուք անհարթարարք, անողորմք. սիրե-
լիք դաւաճանեալք, եւ թշնամիք զօրացեալք.

եւ պատահալ երկիր ելին աղբիւրք ի դոյն արեան:
Եւ յետ նորա խոսվեցաւ ճոփս մեծ... եւ յետ նորա
եղեւ սով սաստիկ. եւ ապա մահ տարածած փողա-
ցաւութեամբ, որ մեռանէր ի Բասրա աւուրս քան
հազար անձինս... ի նոյն ամի եկն մարախ եւ կե-
րա զգաւոսս բազումս. եւ ի գալ միւսայ ամին եկն
կարկուտ անուր եւ անտես. եւ փոյց բազում չի-
նուածս, եւ սպան յոյժ բազմութիւն կենդանեաց
վայրենեաց եւ ընտանեաց. եւ էր կշիռն լիտրս եր-
կու» (էջ 360):

Միքայէլի այս տողերը հայերէն թարգմանու-
թենք մուծուած են նաեւ Սամ. Անեցւոյ ժամանա-
կագրութեան մէջ յամն ճԿԳ Հայոց (էջ 86): Վիեն-
նայի Թ. 89, որ Սամուէլի ժամանակագրութեան հա-
րադատագոյն օրինակը կը ներկայացնէ, չունի հա-
տուածս:

¹¹ Մարախի կրկին արշաւանք կը յիշէ այս
շրջանին Միք. Ասորի յամն 1073 (761/2). «տեղի
ունեցաւ մարախի արշաւանք մը. որոնք լափեցին
ցանքերը» (Բ. 524) եւ յամն 1080 (768/9). «Մարախ
եկաւ մեծ բազմութեամբ եւ փասս պատճառեց»:
Հմմտ. եւ Դիոն., էջ 52—53:

¹² Հմմտ. 363, 7—10. «Ջալարհիս եկեալ ա-
ղէտս»: «Ջարթիր երեմիաս, զարթիր եւ ողբա՛ հան-
դերձ մարգարէանալով, որ ինչ թշուառացաք եւ որ
ինչ թշուառանարցս եմք...»:

հաւատ վաճառեալ ընդ սնտոի կենցաղոյս¹³:
չէնք եկեալ անհատք եւ յորովից կողմանց.
գերփուսն տանց եւ յափշտակութիւն ստա-
ցուածոց. կապուսն գլխաւորաց եւ բանաք
յայտնեաց. յօտարութիւն վտարուսն ազա-
տաց¹⁴ եւ անթիւ նեղութիւնք ուսկաց
սուսն քաղաքաց եւ քանդուսն ամրոցաց.
աւերուսն աւանաց եւ հրդեհուսն շինուա-
ծոց...»: Համեմատէ առ այս նաեւ (364,
10—20).

«Ջօրալիւնք անարիք, սնապարձք, զի-
նատեացք, պղերգք, հեշտասէրք, անժուժ-
կալք, կողոպտիչք, գինարբուք, յուզար-
կուք, համարարոյք աւազակաց: Իշխանիք
ապստամբք, գողակիցք գողոց, կծիւք,
կծծիւք, ժլատք, ազահք, յափշտակողք, աշ-
խարհաւերք, աղտեղասէրք, ծառայիցն հա-
մամխոք: Դատաւորք ամարդիք, սուտք,
խարողք, կաշտառուք, անընտրողք իրա-
ւանց, անհաստատք, հակառակողք: Եւ
բարձուսն առհասարակ յամենեցունց սիրոյ
եւ ամօթոյ»:

Քաղաքական, տնտեսական եւ բարոյա-
կան կեանքի բարդութիւնները ճշգրիտ կը հա-
մապատասխանեն այն տարիներուն (772—
773), ուր բնութիւնը կը նայէր երկրին դա-
ժան հայեցուածքով: Թագաւորները խիստ են
եւ չարաչար, անոնց լուծը ծանր է եւ
դժուարակիր, վերակացուները (ոստիկան-
ները) անհարթարարք եւ անողորմք: Ճիշդ
այսպէս կը նկարագրէ ժամանակը նաեւ
Սուրն Դիոնեսիոս Թել-Մահրեցի (էջ 95—
195): Թագաւորներու (Աբղայի եւ Աբու-
Ջաֆարի) անօրինակ խստութիւնները, հար-
կապահանջութիւնները, բռնազրոյսութիւն-
ներն եւ կեղեքումները ինչպէս Հայաստանի,
նոյնպէս Միջազեաքի ազգարնակչութեան
վրայ ծանրացած էին. որոնց հետեւութիւնն
եղաւ տնտեսութեան քայքայումը, երկրին
ամայութիւնը, յաջորդող սովն եւ ժանտա-
մահը: Միաժամանակ տեղի կ'ունենային
ներքին եւ արտաքին կոիւններ, երբ արիւն
ապաժուժով կ'ոտոգէր երկիրը, կը քան-
դուէին քաղաքներ եւ աւաններ: Հայաստանի

¹³ 360, 14. Այժմ մարաք ի ներքուստ եւ ար-
հաւիրք արտաքուստ. արհաւիրք ի հեթանոսաց եւ
մարաք ի հերձուածողաց...:

¹⁴ Հմմտ. եւ 359, 1—3. «Ոչ եւս տեսանիմ
գրանաւոր քո հօտ ի վայրի դալարուջ եւ ոչ ի ջուրս
հանգստեան սնեալ, եւ ոչ ի փարախ հաւաքեալ
զղուշանալով ի դայլոց, այլ ցրուեալ սնապատաց եւ
գահալիժութեանց»:



անցքերու համար մանրապատում պատմիչ ունինք Ղեւոնդ երէցը, որ մէկ ահնարկով տուած է երկրին քանուհիինգամեայ շրջանին պատկերը՝ 750էն մինչեւ 774: Այս քառորդ դարու պատմութեան դէպքերը հիւսուած են իրարու հետ օղակաձեւ եւ կը կազմեն անընդհատ շարք մը տխուր արարուածներու, ուր կը յաջորդեն տեսարանները քառմանի սաստիկութեամբ:

Լսենք նախ հայ պատմիչին: Արարական լայնանիստ պետութեան թագաւորներն են՝

Արդւա Ա. (Արդ Ալլաճ արու-Արբաս ալ Սաֆֆաճ, 750—754, Յունիս 9).

Արդւա Բ. (Արու Ջաֆար ալ-Մանսուրի, 9 Յունիս 754—775, Հոկտ. 7):

Երկուքն ալ «խիստ եւ չարաչար» բռնապետներ են, որոնց լուծը ծանր է եւ դժուարակիր, հրամանները անտանելի. ունին անոնք իրենց ձեռքի տակ անհարթարար եւ անողորմ վերակացուներ, զորոնք կ'անուանէ Ղեւոնդ՝

ա. Ծալէճ¹⁵ (Սալիճ բ. Սուրէյճալ-Կինդի, 750/751).

բ. Եղիտ (Եազիտ բ. Ուէյդ աս-Սուլէմի, 751—769).

գ. Բագար (Բեկկար բ. Մուսլիմ ալ Ուկէյլի, 769—770).

դ. Հասան Կահազբայ որդի (770—775):

¹⁵ Ասոր մասին կը գրէ Ղեւոնդ. «Ասացից եւ վասն ապագային այնմիկ, զոր նախ առաքէր Արդւա անօրէն եւ արիւնասեղ, յորմէ բազումք զպուշայեալ պիտի նեղութեան տանել» (էջ 133): Այս Ծալէճը կը յիշէ նաեւ Մայն Դիոնեսիոսի ժամանակագրութիւնը պայտի խօսքերով. Ծալիճ Ծարիճի որդին ելած եւ մտածէր Հայաստան (1063 = 752/53ին): Նա բռնած էր պատանդներ բոլոր լեռան վրայ (= Հայաստան) եւ գաւառները իրեն պիտի յանձնուէին: Ծալիճ երբ ներք վերադարձուին: Բայց որովհետեւ ներքերտի Յովհաննէսէն եւ անոր ընկերներէն վրէժ լուծէ, [Յովհաննէս] խնդրին կատարուած կը յետաձգէր ցածները: Այսպէսով անոնք երկու մնացին. այլ եւ մեռան գերութեան մէջ: ... Յետոյ Յովհաննէս Արդ-բոլոր գանոնք, որոնք Ծալիճէն իրբեւ պատանդ բռնուած էին» (էջ 55):

Յովհաննէս որդի Դագայի, Նիքիէրտի Փիս գիւղէն էր եւ ծանօթ էր իրբեւ արի եւ աստուածաբան անձնաւորութիւն (Հմմտ. անդ, էջ 47):

Վերակացուներս կը ծանրացնեն հարկերը եւ հարկապահանջութեամբ կը տառապեցնեն բնակչութիւնը: Երկրին տնտեսական պայմանները անտանելի կը դառնան. որուն հետեւութեամբ «էին ոմանք ի նախարարաց Հայոց, որք մերժեալ լըին զժառանգութիւնս իւրեանց եւ փախստեայ անկան յաշխարհն Յունաց»: Ուրիշները Դագիկ Արծրունւոյ հետ միացած «ելեալ ասպատակ սիռէին» շրջակայ գաւառները՝ Ատրպատական եւ այլն, հետամուտ թալանի եւ կողոպուտի, «յորում գործէին գործ անհաճոյ Աստուծոյ» (էջ 134). բայց ի վերջոյ կը զսպուին բարձրագոյն իշխանութենէն. Դագիկ կը ձերբակալուի եւ կը վախճանի «ի տառապանս բանտի, իրբեւ զայր մի յանարգաց¹⁶. եւ զորդիս նորին զՀամազասպ եւ զՍահակ յուրով ժամանակս կալեալ ի կապանս, ապա ուրեմն... հաշտէր ընդ նոսա» (էջ 134—135):

«Թշնամոյն զժոխածեւ ազահութեամբը» ոչ միայն կը ծծուին նախարարներու եւ ուսմիկին ինչքերն ու գանձերը, այլ եւ «զբոլոր երկիրս Հայոց» կը քամեն, այնպէս որ «վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս»: Բայց եւ այնպէս արծաթասէր հարկապահանջները կը շարունակեն իրենց կեղեքումները անանկացած ժողովրդեան վրայ. «չար կտտանօք, դելարանօք եւ կախաղանօք եւ դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան», պահանջելով «զգիրս փրկանաց անձին իւրեանց»: Անտանելի կ'ըլլայ ժողովրդեան վիճակը. «յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս եւ ի փապարս երկրի՝ զօղեալ թաքչէին. եւ ոմանք ձիւնահեղձ եւ դեռավէժ լիւնէին վասն անտանելի աղէտիցն» (135): Ազգարնակչութիւնը «թափուր մնացեալք յամենայն ստացուածոց՝ կապէին կապանօք անանկութեան (դ)երկիրս Հայոց. եւ առ հասարակ ճաշակէին ի հնոցէ ազքատութեան նախարարք եւ մեծամեծք» (136):

Այս հարստահարութիւններու դէմ զուր տեղ կը բողոքէին Բագրատունի Սահակ իշխանն եւ Կաթողիկոսն Տրդատ Ա. Ոթմսեցի (741—764). «այլ ոչ լուաւ զազազակ նոցա

¹⁶ Իր մասին է հաւանօրէն Մայն-Դիոնեսիոսի թիւ-Մահրեւոյ տողերս (էջ 148).

«Այս տարի (772/3) Մեծ Հայաստանի պատրիկի զէմ ապստամբեցան եւ զանիկս սպանեցին սրով: Կ'ըսուի թէ այս մարդը 100.000էն աւելի զերի ունէր: Ասին նաեւ անոր բոլոր ինչքերն, զոր տարին թագաւորին»:

Եղիտն որ ի վերայ հարկին էր յաշխարհիս»: Բողոքի ձայները շատ ուշ կը հասնին ամերապետին, որ թէեւ 769ին ետ կը կանչէ Եղիտը եւ անոր տեղ Բագարը կը նշանակէ, բայց սա հազիւ տարի մը անցուցած Հայաստան՝ ետ կը կանչուի. կ'ուղարկուի Հասան Կահաթբայ որդին, որ իւր խորասանիկ գունդով կը մտնէ Դուին՝ յետնագոյն անանկութեան հասցնելու ժողովուրդը (136):

Այսպիսի հանգամանքներու մէջ բնական հետեւութիւնն էր ժողովրդեան բարոյալքումը, եւ առ հասարակ բարոյական կարգերու խանգարումը: Խորասանիկ գունդը «ստաւել դառնութեամբ յաճախ գործէին զգազրազորութիւն եւ բազմացուցանէին զաղէտս եւ զհեծութիւնս աշխարհիս» (136). «եւ եւս առ այսօրիկ արհամարհութիւնք հայրապետաց, այսպնութիւնք եպիսկոպոսաց, դան եւ խոշտանգանք քահանայից, իշխանաց եւ նախարարաց քարանք եւ քայքայութիւնք» (137):

Աղէտը օր աւուր կը սաստկանար հարկապահանջներէն. երկրին դիւաւորները չունէին որ եւ իցէ միջոց ընդդիմանալու. «որում ոչ կարացեալ հանդուրժել զօրագլուխք աշխարհիս՝ հեծէին եւ հառաչէին յանհանդուրժելի տաղնապէն: Քանզի զոմիկ բազմութիւն մարդկան խոշտանգէին ազգի ազգի շարեօք: զոմանս փոկահարութեամբ լլիկէին վասն հարկապահանջութեան դառնապէս, եւ զոմանս դելարանօք եւ կախաղանօք, եւ զոմանս մերկացեալ ի զղեստուցն՝ արկանէին ի մէջ լճից յաւուրս գառնաչունչ ձմերայնուոյ, եւ կարգէին ի վերայ պահապանս, զի չարչարեցնէն գնոսա, եւ այնպէս չարալլուկ կտտանօք կեղէին զկեանս նոցա»: Եւ կը յաւելու պատմիչը «զոր պատմել ոչ կարեմք զաղետիցն պատմութիւն» (137):

Ղեւոնդի այս տողերը կը գտնեն արձագանգ Ստոյն Դիոնեսիոսի ժամանակագրութեան մէջ: Ղեւոնդ, Ողբի եւ Թեւ-Մահրացուոյ տեղեկութիւններն այնպէս նման են իրարու, որ ընթերցողը վայրկեան մը կը ստիպուի մտածել թէ ասորոյն տեղեկութիւնները ծանօթ չէ՞ին արդեօք հայ պատմիչին. ինչ որ ի հարկ է զժուարին է հաստատել: Անոնք ժամանակի թելադրութիւններն են, լսելի եղած ժամանակակիցներուն հաւասար սաստիկութեամբ: Նաեւ ասորի ժամանակագիրը կը զգայ իւր վրձինը տկար

նկարելու աղէտին պատկերը բնական գոյներով. «Թող չկարծէ մէկը, եղբարք, թէ ես ստուարացուցի իրողութիւնները. գիտնան անոնք որ աշխարհիս եղեգներն եւ թղթերը պիտի չբաւեն գրի աւանդելու այն աղէտները, որոնք ծանրացան մեր օրով մարդկութեան վրայ: Նաեւ ոչ ոք մեղադրէ զմեզ, թէ նուազ գոյներով ներկայացուցինք իրողութիւնները, որովհետեւ անտակ ենք ամէն բան յիշելու եւ յիշատակելու. այս աղէտները մէկ քաղաքի մէջ միայն տեղի չունեցան» (էջ 144):

Երկար աշխատութիւն պիտի արժէ, եթէ ուղեմ Ղեւոնդի տողերուն կից յառաջ բերել Ստոյն Դիոնեսիոսի շատ սրտաշարժ բայց երկարաբան նկարագրութիւնը հարկապահանջութեան տեսակներու եւ եղանակներու մասին (էջ 122—148): Մեր նպատակին համար բաւական կարող են ըլլալ Միքայէլ Ասորոյ տողերը, որոնք յեցած են նոյն ժամանակագրի վկայութիւններուն վրայ. «Արու Ջաֆար ծանրացուց ամէն տեսակի տուրքերը, ամէն տեղ եւ ամէն ժողովուրդի վրայ. քրիստոնեաներու համար կրկնապատկեց տուրքի ամէն տեսակները» (Բ. 522): 1083ին (772) Արու Ջաֆար Բարեւոնէն գնաց Միջագետք, Ասորիք եւ Պագեստին: ... Անիկա բոլոր արծաթն եւ ոսկին մթերեց իւր գանձարանին մէջ, այնպէս որ բացի վաճառականներէն չէր տեսուեր ոչ մէկուն քով դենար կամ գուդա: Կարիքը կը ստիպէր որ մարդիկ կրկնէին մեռելներու դամբարանները եւ պղծէին անոնց փոշիները: Փոշին կ'ամային ջուրի մէջ ջոկելու համար ոսկին, արծաթն եւ այլ թանկագին իրերն, որպէս զի գանոնք տուրքի փոխարէն տային հարկապահանջներուն» (Բ. 526):

Հարկապահանջներու անխիղճ հարստահարութիւնները, տանջանքները առանց կրօնի եւ դասակարգի խտրութեան կը խտանային թէ քրիստոնէի, թէ մահմետականի եւ թէ այլ աղանդաւորներու վրայ. անոնք կը տարածուէին թէ ազատի եւ թէ ուսմիկի վրայ: «Եթէ քրիստոնեաներն միայն առարկայ ըլլային այս հալածանքներուն, կը գրէ Սուտն Դիոնեսիոս (144), իրաւամբ պիտի փառաւորէի մեր ժամանակի մարտիրոսները աւելի քան բոլոր նախընթաց ժամանակի վկաները. վասն զի երկարատեւ անվերջ շարչարանքներէ աւելի քաղցր է սրով կատարուած արագ մահը: Ս. Բարսեղ ըսած է. Ես չտե-

այս մէկը, որ աղքատութեան պատճառաւ բանտ դրուած կամ շարժարանքի ենթարկուած ըլլայ: Նա այժմ պէտք էր դալ եւ տեսնել հաղարաւորներ եւ բիւրաւորներ՝ արար եւ ասորի, յանցաւոր եւ անմեղ, աղքատ եւ հարուստ, բոլորը անխտիր: ... Հարուստը շարունակ կը ճաշակէր դառնութիւնը, վասն զի անիրաւ կերպով կը յափշտակէին ունեցածները եւ իւր ոսկրները հարուածներու տակ կը խորտակէին. եւ աղքատը կ'ըմպէր նոյն բաժակէն, վասն զի չունեցածը կը պահանջէին իրմէ. նա չէր կարող ոչ փոխ առնել եւ ոչ վաստակել, վասն զի հնարաւորութիւն չունէր աշխատելու իւր ազարակին կամ այգւոյն մէջ¹⁷:

Նկատմամբ պատերազմներու, որոնց մասին կ'ակնարկէ Ողբերգուն, բաւական է յիշեցնել 744—750 շրջանին Օմմայեանց եւ Աբբասեանց մէջ բորբոքած ընտանի կուրներն եւ արիւնահեղ ընդհարումները. Աբու Ջաֆարի օրով (763) Կամախի եւ Խարբերդի տարեւոր պաշարումը, երբ յոյն եւ արար գորախումբերը ասպատակեցին շրջակայ գաւառները (Դիոն. 74 եւ 75), գերիներու ասպատակութիւնը (Դիոն. 99) եւն են, որոնց հետեւութեամբ անհամար արիւնհեղութիւններ տեղի ունեցան, քանդուեցան քաղաքներ, անապատացան քաղաքակրթուած գաւառներ: Ողբասացին խօսեցրէր. «Չէնք եկեալ անհատք եւ յուրից կողմանց» կը վերաբերին ասպանուած այն ժողովուրդին, որոնց մասին կը գրէ Դիոնեսիոս յամն 766/70 (էջ 95 եւ 96). «Այս միջոցին թագաւորը Պարսից երկրէն ուղարկեց ժողովուրդ մը, որ ելաւ եկաւ եւ հաստատուեցաւ Հոռոմներու սահմանին վրայ: Ասոնք մերկ եւ բոկ մարդիկ էին. այսպէս նաեւ իրենց կանայք եւ երեխայք: Ասոնք բան մը չէին գիտեր. իրենց աղօց բան մը չէին սորվեցներ. կրնէին չգիտէին անգամ կտաւ գործել: Ասոնց բովանդակ արուեստն էր օր ու գիշեր թագնուիլ ճանապարհներու վրայ՝ սպաննելու, կողոպտելու եւ թալանով գրաւելու: Որովհետեւ անմատչելի լինէրու

վրայ կը բնակէին, ոչ ոք չէր կարող սանձահարել զանոնք: Համարձակեցան մինչեւ անգամ գլուխ բարձրացնել թագաւորին դէմ եւ հաւատացեալներու թագաւորին դանձին ձեռք կարկառել: Որովհետեւ այսպիսի գործի մը յանդիմանեցան եւ միւս կողմանէ բովանդակ այն կողմերը թալանի ենթարկեցին, թագաւորը անոնց վրայ բանակ մը զրկեց: Քանդեցին աւերեցին անոնց բնակավայրերը, կողոպտեցին զանոնք եւ կալանաւորեցին: Հաւաքելով զանոնք ուղեցին դամէնքը սուրի մասնել... բայց ապա որոշուեցաւ Կամախի դիմաց կռուի դաշտը դրկել, որպէս զի հոն երթան բնակին: Ասոնք մօտաւորապէս 300.000 հոգի էին: Բայց փախան անկէ եւ տարածուեցան բովանդակ երկրին վրայ. այնպէս որ փոքր թիւ մը միայն մնաց հոն. եւ որովհետեւ այն երկիրը ցուրտ էր եւ իրենք մերկ, մեծագոյն մասը առաջին ձիւնին կտորուեցաւ: Բայց անոնք որ ապրեցան, շարունակեցին իրենց շարագործութիւնները»:

Բարոյալքումը ժողովուրդեան եւ բարոյական կարգերու խանդարումը հաւասարապէս նկատուած են նաեւ Միջագետք (Դիոն. 149—157). անոնք առանց տարակուսի հետեւութիւններն էին ընդհանուր աղէտին, հարկապահանջութիւններուն, աղքատութեան, սովին եւ յուսահատական պայմաններուն: Բայց ժամանակը դատած էր ընդհակառակը, արգելեցին պատճառը հետեցուցած էր. ուստի ամէն շարեաց շարժառիթը նկատած էր մեղքին մէջ. այսպէս Ողբասացը, այսպէս Ղեւոնդ (136) եւ այսպէս ասորի ժամանակագիրը (Դիոն. յաճախ):

Ինչպէս բնութեան արհաւիրքներու, նոյնպէս քաղաքական կեանքի եւ տնտեսական պայմաններու համազումար պատկերը կը ցոյցանէ իւր մէջ Հայաստանի կացութիւնը 770—774 տարիներուն:

Ողբին գրութեան ժամանակի համար այս ներքին ապացոյցներս կը կարծեմ թէ համոզիչ են. եւ առանց կանգ առնելու մանր հարցերու շուրջը կարող ենք ի խնդիր ելլել Ողբին հեղինակին:

5. Եթէ Մովսէս Խորենացի «Հայոց Պատմութեան» հեղինակն է, Ե. դարու առաջին կէսէն, բնականաբար անոր անունը չի կրնար փնտռուիլ Ը. դարու երրորդ քառորդին յօրինուած Ողբի մը ճակատին: Իսկ եթէ «Հայոց Պատմութեան» հեղինակը

¹⁷ Հմմտ. հարկապահանջութիւններու մասին Յ. Չորեան՝ Աբբասիդներէ հարկային քաղաքականութեան համարանի գիտական Տեղեկագիր, Թ. Sorian, Die soziale Gliederung des armenischen Volkes im Mittelalter. Armeniaica, herausgegeben von K. Roth, Fasc. II (Leipzig 1927), S. 59—62.

նոյն Ը. դարու երկրորդ կէսէն համարինք, ինչպէս բանասէրներէն ոմանք կը միտին կարծել¹⁸, այս դժուարութիւնը մասամբ մը հարթուած կարելի է նկատել: Բայց դարձեալ առեղծուած պիտի մնայ, թէ ինչո՞ւ պատմիչը ինքզինքը Ե. դարէն կեղծելով հանդերձ, իւր մեծ կառուցուածքին վերջաւորութեան՝ աղէտի դարուն պատկերը քանդակած է: Ոչ ապաքէն անոր Պատմութեան նպատակն էր յուսահատ ժողովուրդեան քաջարի նախնիքներու օրինակով խրախոյս ներշնչել:

Ուստի ամէն տեսակէտով անբնական եւ անյարիր է Ողբս «Հայոց Պատմութեան» վերջը եւ չի կրնար համարուիլ անոր հեղինակի գրչին արգելեցրէ: «Հայոց Պատմութիւնը», ինչպէս կ'երեւայ, յեղակարծումն ընդհատած է եւ հեղինակին հնարաւորութիւն չէ եղած կցել անոր պատշաճ վերջաբան մը: Ողբս այդ վերջաբանին տեղ ազուցուած է «Հայոց Պատմութեան» վերջը, փոխ առնուած ուրիշ աշխատութեան մը: Փնտռենք այժմ այդ աշխատութիւնը եւ անոր հեղինակը:

Ինձի կը թուի թէ Ողբիս հեղինակն է Ղեւոնդ երէց, եւ յօրինուած է իբրեւ վերջաբանութիւն անոր Պատմութեան նախնական մասին, որ կ'աւարտէր 773 եւ 774 տարիներու դէպքերու նկարագրութեամբ:

Ողբին ընծայած պատկերը կ'ուրուագծէ իր մէջ այն շրջանը, որ նիւթն էր Ղեւոնդի Պատմութեան նախնական մասին վերջին երկու գլուխներուն: Պատմիչը նկարած է աղէտին պատկերը եւ ինկած անոր առաջ՝ սղբացած է Հայրենիքի թշուառութիւնը. «Ողբամ գրեզ Հայոց աշխարհ, հանուրց հիւսիսականաց վեհազոյն...»:

Արդեամբք ալ, ինչպէս տեսնք վերագոյն, Ողբին արիւնախառն արտասուները, իրենց դառնութեամբը լիովին կը համապատասխանէին այն արտասուներուն, զորոնք հոսեցուցած էր Ը. դարու երկրորդ կէսը ժամանակակից մարդկան ականոցիքներէն, ի տես բնութեան արհաւիրքներուն, սահեղ ընդհարումներուն, սարսափելի աղէտին եւ անբարոյականացած կենցաղին:

Տարիներ յետոյ, երբ միւսանգամ ձեռք առած է Ղեւոնդ վրձինը, նկարելու ժամանակակից պատմութեան միւս էջը՝ 774—790

տասնուհինգամեայ շրջանը, ոչինչ միտիթառական չէ գտած նաեւ հոն. Հայրենիքին քաղաքական, տնտեսական եւ կենցաղական պայմանները չէին բարւոքած գծաչափ իսկ. նոյն բունաւորներն էին դարձեալ երկրին դաժան տէրերը, այս անգամ անուան միայն փոփոխութեամբ. Ահարոն (Հարուն էր Ռաչիդ) եւ անոր եղբայրն՝ Ովբեդլա նոյնպէս «ազահ եւ արծաթաւք» էին, «ի հակառակութեան ընդ միմեանս», ունէին իրենց ձեռքի տակ «հրամանատարս ապարասան եւ ժանտարարոյ անաստուածութեամբ, որք գերկիւղ Աստուծոյ անգամ եւ ընդ միտ ոչ անէին» (166). Այսպէս եղիտ որդի Մզղէի, այսպէս Սուլէյման «քան զամենեսին ժանտ եւ շարագործող». որոնք «զանբառնալի լծոյ ծանրութիւնն եղեալ ի վերայ մարդկան, զոր ոչ կարէին բառնալ...» (167): Վերջնոյս ձեռքի տակ կը գործէ Իրնդուկէ, «անօրէն եւ վատթարագգի, դժոխաձեւ եւ շարաշուք այրն ամբարիշտ» (167, 169): Հարկապահանջութիւնը կը խստանայ, պահանջողները «ի յետին տնանկութիւն» կը հասցնեն ազգաբնակչութիւնը «յանհամբեր նեղութեանցն» (167)¹⁹:

Նոր պատկերիս առջեւ կը մնար հեղինակին միայն վերջիչել 774ին հիւսած Ողբը եւ կցել անոր նոր կայլակներ արտասուքի, պատշաճեցնելու համար զայն Պատմութեան նոր մասին իբրեւ վերջաբան: Այսպէս ալ հաւանօրէն կատարուած է. որովհետեւ այժմ Պատմութեան վերջը չենք գտներ հրաժեշտի խօսք. այս պակասը սքանչելի կերպով պիտի լրացնէ Ողբս, փոփոխելով զփոփոխեալն:

Ողբս սակայն չէ մնացած իւր պատշաճ տեղը: Այն փրցուած է Ղեւոնդի Պատմութեանէն եւ զետեղուած իբրեւ վերջաբան Մ. Խորենացոյ «Հայոց Պատմութեան», ուր կը գտնուի նաեւ այժմ: Այս անշատումը տեղի ունեցած է Ղեւոնդի Պատմութեան յրմթացս Թ. դարու: Մենք տեսնք վերագոյն, որ Յովհ. Դրասխանակերտցի կարդացած էր զայն Մովսիսի Հայոց Պատմութեան իբրեւ մաս:

Մ. Խորենացոյ Հայոց Պատմութիւնը երեւան եկաւ հաւանօրէն 790էն յետոյ եւ

¹⁹ Այս շրջանի հարկապահանջութեան եւ անհասարակ հարստահարութեանց մասին հմտ. Agop Sorian, Die soziale Gliederung des armenischen Volkes im Mittelalter, Armeniaica, Fasc. II, S. 62—64.

¹⁸ Անահիտ, 1929, Թ. 4, էջ 71—73:

Երկրի անբերութիւնը պարզ է և անաճելութիւնը կենդանեաց, այլ և սաւանմունք և զգրգմունք... սովք անբուք և հիւանդութիւնք և մահք բազմօրինակք:

46—47. Այս թէ լինիք ինչ հետեւանք փաստաց ի սաստիկ որոտաւոյ, իբր թէ կարկուտք և հրաձգութիւնք. այս ի վրէժնորթութիւն անզգամաց և ի խրատ այնոցիկ որ զահ և զերկիւզ Արարչին չունին յանձինս իւրեանց: Քանզի... անչափութիւն անձրեաց սղոյանեն, և երաժշտութիւն զերկիր զարարերը ցամաքեցուցանեն. և ժանտախտք, սուր, հիւանդութիւնս, մինչև հարկանել մարդ և անասուն առ հասարակ...»:

7. Գրեցոր Խալաթեան նկատած էր արդէն թէ Մ. Խորենացւոյ «Հայոց Պատմութեան» և Ղեւոնդի Պատմութեան մէջ կայ մերձաւոր աղերս մը: Ոչ միայն մտքի նոյնաձեւ արտայայտութիւններ, այլ և բառական նմանութիւնները կը տեսնուին երկու հեղինակներու գրուածներու մէջ: Խալաթեանցի կարծիքով Մ. Խորենացի նաև հոս գողութեան յանցանքի մէջ է: Այս տեղիքներուն յետոյ առիթ պիտի ունենանք անգրադատնապէս այն հատուածները, որոնք Ողբին կը վերաբերին:

Խալաթեան Ղեւոնդի Պատմութեան և Ողբի մէջ²² յանուանէ հետեւեալ տեղիքը մասնացոյց կ'ընէ.

Ողբ. Արդ ով որ առանց արտասուաց բերեց զանհարին աղէտան որ ժամանեաց նոցա. զի սուրբ եկեղեցին խրթնացեալ ի բարեգարգութեմէ՝ քիմին. և լուեալ ձայն աստուածային փառատրութեան...:

²² Армянские Архаивды, I, 367, II, 140.
²³ Բառս կը գործածէ Ղեւոնդ նաև այլուր. համար. 162. «տեսեալ զգեղազէշ վայելչութիւն փազնոյն»:

Այս տողերուն կից կը գրէ Խալաթեանց. «Ղեւոնդ ուրիշ տեղ մը (էջ 136—137) սեւ գոյներով նկարած է իւր հայրենակիցներու զժնդակ կացութիւնը շարաշուք արարներու ծանր լուծին տակ (Ը. դարու կէսին). որ հաւանօրէն նոյնպէս առանց ազդեցութեան չմնաց Հայոց Պատմութեան զմեզ հետաքրքրող գլխոյն [իմա՝ Ողբին] վերջին հատուածներու գրութեան վրայ²⁴»:

Առանց տարակուսի սրամիտ են Խալաթեանցի այս ակնարկութիւնները. բայց ցաւ է որ նա չէ կրցած շահագործել ըստ արժանւոյն իւր առաջին տպաւորութիւնները: Նա տեսած է Ողբին և Ղեւոնդի մէջ նմանութիւններ, բայց չատացած է անոնց մէջ մատնանշել բանագողին հետքերը միայն. և որովհետև Ողբին հեղինակը (Մովսէս) մէկէ աւելի անգամներ բռնուած էր այս յանցանքին մէջ, ուստի բնական էր որ այս անգամ ալ անոր վերագրուէր բանագողութիւնը:

Բայց մենք տեսանք թէ Գր. Նազիւնդացւոյ և Փիլիսի գրութիւնները նաև Ղեւոնդ կարգացած է և առած անոնցմէ փոխ բառեր և մտքեր: Ուստի այս նմանութիւններու մէջ փոխանակ բանագողութեան վրայ մտածելու, կարելի էր նաև խորհիլ թէ արդեօք Ողբի հեղինակն և Ղեւոնդ չէին կրնար նոյն ըլլալ: Ես աւելի մ'անր բաղդատելով Ողբն և Ղեւոնդի Պատմութիւնը գտայ ուրիշ բառական և մտքի նմանութիւններ: Ասոնք են.

| | |
|---|---|
| Ղեւոնդ. | Ողբ. |
| 127. Չայս ամենայն չարիս և զ[ը]րդմունս պատերազմաց և գառմունս քաղաքաց... և հեղմունս արեանց կատարելալ... | Սասանունք և զգրքդմունք... առումն քաղաքաց և քանդունս ամբողջաց... |
| 136. Մանուանդ թէ ոչ նա, այլ կամք Ուղղչի իւխտնացն կատարի, որում ի վերուստ վկայէր բարկութիւն զոլ բազմութիւն մարտոյն և կարկուտք և երաշտութիւն անձրեաց. սպտեթիկ ցոյցք բարկութեան ի վերայ մեր: | Եւ ապա յանդիմանութիւն սյոսցիկ զե՞նչ, եթէ ոչ անտես առնել Աստուծոյ. և տարբեր փոփոխել զընտելիւնս իւրեանց: Գարուն երաշտացեալ... ամպք հրենկէցք, կարկուտալ... |
| 137. Չի արդարեւ սով և սուր և սասանութիւն յանձինս յարգապետութեան նորա: | սասանումն և զգրքդմունք... սովք անբուք և հիւանդութիւնք և մահք բազմօրինակք: |

²⁴ Անդ Ա, էջ 367—368:

135. Դժոխսաձեւ ազահութիւն անհամարյր թշնամայն ոչ շատացաւ ուտել զմարմինս ընտրելոց Գրիստոսի հոտիս և ըմպել զարեւն իբրև զքուր... յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փապարս երկրի՝ զօղեալ թաքչէին. և ոմանք ձիւնտեղիս և զեղեղիս լրնէին վասն անտանելի ազէտիցն:

133—135. Ասացից և վասն աստուածին այնմիկ... Գաղիկ որ էր անը Արծրունեաց տանն... Ժողովեալ առ ինքն զմարտաբարս աշխարհին... Ելեալ աստուածի սփռէր... յորում զործէին զործ անհաճոյ Աստուծոյ, նմանեալ անօրինաց... ապա... անկեալ (Գաղիկ) յամբոյն (նկան)՝ դադարէր առ սակաւ մի... յետոյ... Մուսէ... դաւով նենդեալ կոչէր ի խաղաղութիւն. և ըմբռնեալ տայր ի ձեռն իշխանին իսմաթէլի: Եւ նորա արկեալ զնա ընդ կաղանթօ՝ զնէր ի կալանս բանտի յանհամարժեքի նեղութեան և պահանջէր ի նմանէ զարծաթն զոր հարկապահանջութեամբ ժողովեալ էր յերկրէն Պարսից: Իսկ նորա ոչ խնայեալ ի զանձս, որչափ դատնէր ի ձեռն նորա, զի թերևս կարացէ շահել զկեանս իւր. այլ ոչինչ դատեալ՝ անդէն վախճանէր ի տառապանս բանտին, իբրև զայր մի յանարգաց:

Եւ զորդիս նորին զՀամագաստ և զՄասակ յորով ժամանակս կարեալ ի կապանս... 133. Ծալէ... այլ այր անօրէն և արեւնահեղ, յորմէ բազումք... բանդի ոչ կարէին յայնժամ այնպիսի նեղութեանց տանել. ... մերժեալ լինին մտաւնգութիւնս իւրեանց և փախստեայ անկան յաշխարհն Յունաց...:

134. Ի երամամտաբութեան Եգիպտի և յիւսիսանութեան Արդիայի միտոյ յոյժ ծանրացաւ... Ոչ ևս տեսնեմ զրանուր քո հոտ ի վայրի զալարեալ և ոչ ի ջուրս հանդատեան սնեալ, և ոչ ի փարախ հաւաքեալ զդուշանալով ի զայլոց՝ այլ ցրուեալ անապատաց և զաւաղիժուրեանց: Եւ ոչ զիտեմ, եթէ զիւարդ յարմարեցից զարդ ընդ զմարտիկ և թաւալաւ աստուածից. զհաւորս, զխորհրդաւորս, զարդարեալս, և կամ զմարտիկս, և կամ զարդարեալս, և կամ զարդարեալս, և կամ զարդարեալս... Զօրականք անարիք... համարարոյք աւաղակաց: — Իշխանք ասպատարք, զողակիցք զսղոյ... յափըշտակիցք, աշխարհաբէրք, աղտեղապէրք ծառայիցն համամիտք:

անուր լծոյ հարկապահանքս քուրեան... զորոյր երկիրս Հայոց արկանէր ընդ անհանդուրժելի վտարանգիւք... յորմէ փախստեայ եղեալ բազումք... վասն անտանելի ազէտիցն... Ոչ լուաւ զազաղակն նուր Եգիպտոս... ի տեսնէ կարծանային սիրտ նորա... Իշխանաց եւ նախարարաց քարշակք և խախտարաց քարշակք և անբիւն ցայկայութիւնք... գոաքիւն քարշակք... և չարաշարք. բեռնիս բառնալով ծանուս և զժուարակիրս, հրամանս տալով անտանելիս. վնգիւք... յորմէ փախստեայ եղեալ բազումք... վասն անտանելի ազէտիցն... Ոչ լուաւ զազաղակն նուր Եգիպտոս... ի տեսնէ կարծանային սիրտ նորա... Իշխանաց եւ նախարարաց քարշակք և խախտարաց քարշակք և անբիւն ցայկայութիւնք... գոաքիւն քարշակք...:


Համեմատութեան այս տեղիքները մեզի ծանօթ էին արդէն: Ես կրկնեցի այս ձեւով, աւելի ակնբախ ընծայելու համար, թէ ո՞րքան կախում ունին Ողբին տողերը ուղղակի Ղեւոնդէն: Ասոնք ընդհանուր պատկերներ չեն, ցրուած մասերնին մէջ, այլ ըստ մեծի մասին կը վերաբերին 750—774 շրջանին, ձիւղ այն կէտին, որ մասնաւորապէս առարկայ պիտի ըլլար Ողբին, և որուն արդէն պատմական համեմատութիւնները բերած հասուցած էին զմեզ:

Այսպէս արտաքին ապացոյցներու քով կու գան կը խտանան նաև ներքին ապացոյցները, հաստատելու թէ Ողբս գրուած է 774ին, և այն Ղեւոնդ երկրցու գրչէն, իբրև մասն անոր Պատմութեան նախնական խմբագրութեան:

8. Որովհետև կարեւոր խնդիր մըն է Ողբին փոխագրութիւնը ի վերջ Ղեւոնդի Պատմութեան, անհրաժեշտ կը համարիմ լուծել հոս յարակից զժուարութիւններն ալ:

Ողբին մէկ էական մասին նկատեմ և Եկեղեցւոյ հոգեւոր գլուխները. «Տովիւն և Տովուակիցը»: Կ'ողբայ Ողբերգուն անոնց մէջ իւր հայրն և պաշտպանը: Ողբին ընթացքէն բացայայտ կը տեսնուի թէ նախնաբար միայն «Տովիւն» կամ «Հայրն» նկատի անտուած էր հոն. անոր կորուստն է որ մորմոքում պատճառած է Ողբերգունին: Իսկ «Տովուակիցին» յիշատակութիւնը յետոյ միայն եկած կցուած է «Տովուիւն»: Որովհետև Ողբը նախնաբար ի զէմս հովուի յորինուած էր, խօսքին ընթացքը հորոված էր եղակի զէմքով. յետոյ, երբ յաւելուածարար նկատի անտուած է Տովուակիցն ալ՝ եղակի զէմքը փոխուած է յոգնակի ձեւի:

²⁵ Հմմտ. Ղեւ. 151. «զիտուեմքն... բացընկեցից օթաղայեալ ի վայրի»:



Բայց այս սրբազրուելիւնը ամէն տեղ ճշդիւն չէ կատարուած: Համեմատէ հետեւեալ տեղեկները. «Թէպէտ բռնութիւնն (մահն) գիտեսայն (զհովիւն) ի բաց վարեաց... սակայն դու եւ ոչ յայնմ զքեզ ամայի բոլորիցն ցուցեր՝ զանդրէն քոյոյն յուսարով դարձ հովուակցան (յանձին հովուակցին). իսկ յերրորդ հեռանալս (ի մահուան հովուակցին) ոչ է ակնկալութիւն դարձի»: Լաւ է նոցա (հովուին եւ հովուակցին) բնակել ընդ Բրիտանոսի... զրկեալ եմք... ի հայրենի վերակացութեանէն (ի հովուէն) ... Մովսէս (հովիւն) բարձեալ լինի եւ Յեսու (հովուակցին) ոչ յաջորդէ ... Ռորովամ (հովիւն) մերժեցաւ յիւրմէ ժողովրդենէն, եւ փոխանորդեաց որդին Նարատայ (ոչ հովուակցին). եւ զայրն Աստուծոյ (հովիւն) ծախեաց ոչ առիւծ, այլ կատարունն ժամանակի...: Զիարդ հատուցից զբանս հարցն... ծնան զիս... եւ սնուցին... ի վերայ գերեզմանի (ոչ՝ գերեզմանացն)... աչաց նոցա կափուցման... վտանգիմ կարօտութեամբ մերոյ հորն... ո՛ր ինդամիտ սիրտն ընդունող... ո՛ր աշխատութեանց հանգուցանող: Կորեաւ ժողովորդն... վերացաւ ի գլխոյս պսակն գեղեցիկ եւ կենցաղօրում. գիպրն իմ եւ գփահանայապետ, ... որ երբայր տակեր կատարեալ բան, որով վարէրն եւ յարմարէր... սանձահարէր զլեզուս օտարաձայնս...» (359—363):

Ինձի կ'երեւայ թէ առաջին խմբագրութեան մէջ, գրուած 774ին, ողբերգուն աչքի առաջ ունեցած է Սիրոն կաթողիկոսն եւ անոր մահը լացած. նա է իւր հայրն եւ խնամածուն. անոր հովանաւորութեան տակ առած է իւր կրթութիւնը — հաւանորէն Հայաստանի մենաստաններէն միոյն մէջ (ի Մաքենիս), ուր կը գտնուէր տակաւին, երբ կը դուժէ կաթողիկոսին մահուան բօթը: Կաթողիկոսն («հովիւր») վախճանած է տկարութեամբ բազմամեայ հասակին. «զայրն Աստուծոյ ոչ ծախեաց առիւծ, այլ կատարունն ժամանակի» (360): Ողբերգուն չէ կրցած ժամանել եւ ներկայ գտնուել իւր «հօր» վերջին բողոքներուն՝ անոր աչքերուն կափուցման, եւ ստիպուած է «ի վերայ գերեզմանին» թափել իւր շնորհամիտ զգածումներուն եւ որդեական սիրոյն արտայայտութիւնները, «ասել բան տիրական եւ սպառնալ»:

Ողբին հեղինակը «հովուին» անունը չի

տար: Նաեւ Ղեւոնդ 770—774ի դէպքերը պատմած ժամանակ չի յիշատակեր ժամանակակից կաթողիկոսը. բայց գիտենք Յովհ. Դրասխանակերտցիէն, թէ այս միջոցին կաթողիկոսական աթոռն վրայ կը բազմէր Սիրոն Բաւոնցի (767—774). «սա ի տղայական հասակի սնեալ եւ ուսեալ ի սրբունն հայրապետարանի՝ վարժ եւ կիրթ ի բանաւոր առաքինութիւնս յառաջբերելը: Իսկ ապա նախ քան զայս (նախ քան զընտրութիւնն ի կաթողիկոս) կոչեալ լինէր սա յեպիսկոպոսութիւն նահանգին Աղձնեաց. եւ մինչդեռ անդէն իսկ հովուէր զհաւատացեալն իւր հօտ՝ աղբիւր մի բազմաբուրդի առ ստորոտով Սիրոն կոչեցեալ լերին ցամաքեցաւ... Իսկ որ յայնժամ Իսմայէլեան ոստիկանն էր յայնմ նահանգի՝ Սուլէյման անուն, առ ինքն զեպիսկոպոսն կոչեցեալ՝ աղաչէր զնա թերեւս հնար ինչ գտանել՝ զարձեալ բղխելոյ աղբերն»: Եպիսկոպոսը աղօթքով կրկին կը բղխեցնէ աղբիւրը: «Յետ այսորիկ ապա եհաս ոստիկանն այն պայտապետ եւ զգործակալութիւն Հայաստանեայցս²⁶. եւ ի զնալ նորա ի Դուին քաղաք՝ իսկ եւ իսկ վախճանէր երկրորդն Տրդատ (764—767): Եւ իմացեալ ոստիկանն վաղվաղակի առաքէ ի ինդեր եպիսկոպոսին Սիրոնի եւ ածեալ կացուցանել զնա հրամայէ յաթոն հայրապետութեան». «բայց նորա բազում եւ հրաշալի ճշնողական վարուք վճարեալ զկէտ կենաց իւրոց իբրեւ ամս ութ՝ վախճանի» (Յովհ. Դրասխ. 105—107): Իր յաջորդը կ'ըլլայ Եսայի Կաթողիկոս (774—788):

Յովհ. Դրասխանակերտցոյ տողերէն կը զգացուի թէ Սիրոն բարեհամբաւ եւ բարե-

²⁶ «Տակաւին մութ կը մնայ թէ ով էր 149ին (766) մնչեւ 152 (769) Հայաստանի ոստիկանը՝ գրամներն այս մասին ո եւ է հաստատուն ցուցումներ չեն տար». կը գրէ Ծասմէր (էջ 11): Ծասմէր նկատելով որ 151ի (768) հայկական գահականի մէջ վրայ կը գտնուի Մ գիրը (որ նաեւ 144 եւ 145 տարիներու [760—761] Բասրայի գահականներու վրայ կը տեսնուի), կը միտի կարծել (էջ 12—13 եւ 28) թէ հոս Սուլէյման անունը կարգադրու է. որ ճշդիւ կը համապատասխանէ Յովհ. Կաթողիկոսի տեղեկութիւններուն հետ: Թերեւս այս Սուլէյմանը 760/61ին յետոյ ժամանակ մը գործած է Աղձնեք եւ ապա անցած Հայաստան: Ղեւոնդ սակայն բացայայտ կը գրէ թէ Եղիս Բ. Ուսէյը առ Սուլէյմի ոստիկանին յաջորդէր Բագար, որուն միամեայ ոստիկանութիւնն կ'իջնայ յընթացս 152—153 հիճրէի տարիներուն, այն է փրկչական 769/70: Կարող էր Սուլէյման նաեւ ոստիկանի մը՝ այս դէպքին՝ Եղիսի ենթակայ գործակալ մըն ալ ըլլալ: Ուշագրաւ է որ Սանգանոս Կաթողիկոսի ընտրութիւնն ալ 789ին Սուլէյման ոստիկանի ենթակայ Իրնդոկէ գործակալի թելադրութեամբ կատարուած է:

համբոյր անձնաւորութիւն էր, եւ վախճանած էր բարձր տարիքի մէջ:

Զգիտենք մենք թէ ինչ աղերս ունեցած է Ղեւոնդ Սիրոն կաթողիկոսի հետ: Կաթողիկոսը իր կարծատեւ իշխանութեան շրջանին հաւանորէն մեծ գործունէութիւն մը չկրցաւ մշակել. բայց իր օրով տեղի ունեցաւ դժոխածեւ Եղիսի անկումը եւ Բագարի, ինչպէս կ'երեւայ աղնուարարոյ ոստիկանի առաքումը (769/70). ուստի Սիրոնի ձայնը լսելի եղած է խոտասիրտ Աբու Ջաֆարի առաջ:

Թէ իր մահունէն ետքը մինչեւ յաջորդին ընտրութիւնը ի՞նչ խնդիրներ յուզուցան եւ որքան ժամանակով՝ չգիտենք: Սիրոնի մահը հաւանորէն պատահեցաւ 774ին, ապստամբութենէն յառաջ: Տեղապահութիւնը մինչեւ Եսայեայ ընտրութիւնը թերեւս ժամանակ մը մնաց անհաստատ, անբաւական ձեռքերու մէջ, թերեւս «մոլեկան մոտոզոնի» ազդեցութեան տակ: Յամենայն դէպս ազմկալից էր ժամանակը. «Անտիօքոս բնագատէ թողուլ զօրէնս հայրենիս, եւ Մատաթեայ ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեզ չուրջ պաշարէ, եւ Մակարէ ոչ փրկէ. այժմ մարտք ի ներքուստ եւ արհաւիրք արտաքուստ. արհաւիրք ի հեթանոսաց եւ մարտք ի հերձուածողաց, եւ խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր եւ յարմարէր ի պատերազմ» (360)²⁷: Եւ կ'ողբայ «զաշխարհիս եկեալ աղէտս» (363):

Նկատելով որ Եսայի կաթողիկոսական աթոռի վրայ հրաւիրուած է Գողթնէն, որ Նախիջևեանին հետ կը գտնուէր հաւանորէն Աշոտ Բագրատունւոյ ազդեցութեան տակ, իսկ սա չէր անցած ապստամբներու կողմը, կրնայ մտածուիլ թէ Եսայեայ ընտրութիւնը Աշոտի ճոխութեամբ կատարուած է յընթացս 774—775 տարիներուն, երբ երկրին մէկ մասը ապստամբութեան գրօշի տակ կը գտնուէր:

Անշուշտ Ողբիս տողերը աւելի հասկանալի պիտի դառնային մեզի, եթէ Սիրոնի մահունէն ետքը յաջորդի ընտրութեան չուրջը յուզուած անցքերը ծանօթ ըլլային մեզի մանրամասնաբար:

Այսպէս «հովուակիցը» կը տեսնեմ էս յանձին Եսայեայ Կաթողիկոսի, որ գործեց 775—789 բազմավրդով ժամանակամիջոցի

²⁷ Այս խօսքերը կրնան առնուիլ նաեւ 790ի շրջանին համար:

մէջ, իբրեւ Զօրարարէլ, իբրեւ Մատաթեայ եւ Մակարէ:

Սա բողոքեց Իրնդոկէ հրամանատարի հարկապահանջութիւններու եւ հարստահարութիւններու դէմ. Իրնդոկէ փեսան էր Սուլէյման ոստիկանին, ենթակայի մը Պարտաւ նստող արաբական երկրորդական իշխանութեան (Ալ-Ռաշիդի եղբօր Ուլբեղայի). «Որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին (Իսմայէլացիքն) ի Դամասկոս Ասորեստանեայց, նոյնպէս աստ յԱղուանս նստուցին ի Պարտաւ կալ արբունեացն եւ ծծել զպարարտութիւն երկրիս. եւ մի ոմն յարքունեաց եկեալ բնակեցաւ ի Պարտաւ» (Կաղանկ. 262): «Առ որ ժողովեալ ամենայն նախարարք եւ ուսմիկք հանդերձ եկեղեցականօք եւ կաթողիկոսիւ, որոյ անուն էր Եսայիաս, աղաչէին թեթեւացուցանել զանուր ծանրութեան սակին զոր պահանջէր, եւ ոչ օգտէին» (Ղեւոնդ 167):

Ինչ որ Ղեւոնդ ընդհանուր խօսքերով կ'արտայայտէ նոյնը աւելի մեկին կը պատմէ Աղուանից պատմիչը (262). «Եւ Հայաստանեայք սակս աշխարհին հոգոց զհայրապետն իւրեանց գտէր Եսայի հանդերձ եպիսկոպոսօք առ նա (հաւանորէն Ուլբեղայ) առաքեն» ի Պարտաւ:

Կաթողիկոսին երթն ի Պարտաւ անշուշտ արխասիրտ եւ հայրենապէր ձեռնարկութիւն մըն էր, եւ նաեւ ինքը կարող էր Զօրարարէլի դէմքը յիշեցնել: Սա կը գնահատուի Ղեւոնդէն «երանելի եւ ուղիղ հաւատով կաթողիկոս» (169):

Եթովթ ժամանակները նաեւ այս անգամ թոյլ չտուին Եսայեայ յաջորդի օրինաւոր ընտրութիւնը: Պատմագիրը կը գրէ թէ Իրնդոկէ կողոպտեց Կաթողիկոսարանին գանձերը. եւ այլ եւ այլ ճնշումներ գործադրեց կղերականներու վրայ (789/90): Ստեփանոս «բազում կաշառօք յաջորդեց ի հայրապետութեանն աթոռ» (170): Պատմագրին խիտ խօսքերը չեն ներեր ենթադրել անոր մէջ արժանաւոր յաջորդ մը. նա ոչ միայն «բազում կաշառօք» ձեռք բերաւ աթոռը, այլ եւ «վտանեաց զամենայն ինչս եւ զստացուածս» Կաթողիկոսարանին, ստանալու համար «թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց²⁸»: Այս խիտ զատաստանը մի եւ

²⁸ Այս տողերու մէջ կ'ակնարկուին ժամանակի հարկապահանջութեան ազգի ազգի տեսակները: Արար հարկահաւաքները երբ գոհացում չէին գտներ, հարկի

նոյն ժամանակ կատարածն է Ղեկնորի Պատմութեան: Ասոր պիտի յաջորդէր վերջարանութիւն մը, զոր ես կը համարիմ Ողբիւր երկրորդ խմբագրութեան մէջ:

9. Ողբս ունի իր մէջ անհարազատ տարրեր, որոնք մուծուած են հոն օտար ձեռքէ: Այս տարրերը մուտ գտած են Ողբին մէջ այն ժամանակ, երբ այն բաժնուելով Ղեկնորի Պատմութեանէն միացուած է Հայոց Պատմութեան իրրեւ աւարտարանութիւն Գ. գրքին: Բարեբախտաբար անոնք մեծ թուով չեն. եւ մուծուած են այնպիսի անձարակ ձեռքով եւ անձաշակ ձեռով, որ քիչ մը ուշադիր անշխատ կարող է տեսնել թէ եկամուտ են անոնք: Ներմուծութիւնս կատարուած է Խոր. Գ. 62 գլխոյն աղղեցութեան տակ, Ողբին եւ Մ. Խորենացւոյ Հայոց Պատմութեան մէջ կամուրջ մը ձգելու նպատակաւ:

Ներմուծուած են հետեւեալ ընդգծուած բառերը.

«Մինչ նոքա («նա») զմերն («զմն») յուսային զդարձ եւ պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիւս եւ կատարելագոյն յարմարութեամբս, համայն եւ մեք («իսկ եւս») փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ յուսայաք («յուսայի») հարսանեաց պարել [պարս], անվեհեր երագութեամբ կրթեալք, եւ առազաստի ասել երգս, արդ... հառաչեմ... (էջ 361):

Ընդգծեալ բառերու մէջ ակնբախ են անձանօթ գրչին անձաշակ փոփոխութիւնները եւ յաւելուածները: Ողբերգուն կը խօսէր իր անձի մասին եղակի եւ նկատի ունէր հովիւր: Անձանօթ ձեռքը իւր նպատակին համար

փոխարէն կը բռնադրուէին աւտական երկրատէրերու հողերը, եւ զիւղացիութեան աշխատանքի արդիւնքը կը հոսեցնէին արքունի դանձարանը: Ստեփանոս հարկերն եւ ստացուածքները ածուրդի հանել, որպէս զի կարենայ պատել բնագրաւումէ եկեղեցագատութիւնը: Հմմտ. առ այս Յ. Չօրեան, Արարական շրջանում Փեղոպական Հայաստանի քաղաքի եւ զիւղի միջեւ ստեղծուած հակադրութիւնը: Տեղեկ. կազմի բ. Ս. Ս. Հ. Գիտութեան եւ Արուեստի Գծրախտարար Ղեկնորի այս կարեւոր տեղիքը նկատի չէ անուամբ հոն:

Ուշադրութեան արժանի է Պարտաւի 768ի ժողովի կանոններու ԺԳ. հատուածը ուր կ'ըսուի. «որք... սակաւ ինչ է գոյութեան լինի, եւ վաճառեցէ գեղեկան կամ գուպա սրբութեան, կամ ի կարասեաց, կամ յանգամանաց եկեղեցւոյ, նկովեցի յԱստուծոյ եւ ի մեզ» (Կանոնագրք Հայոց, Թիֆլիս 1914, էջ 169):

բաւական համարած է եղակի դէմքն փոփոխել յոգնակիւի, բայց ոչ ճշգրիտ հետեւողականութեամբ. այսպէս «զմերն» ընթերցուածին քով անփոփոխ պահած է բնագրին «իմովս» եւ «մեք»ը շարունակութեան մէջ ունի «հառաչեմ». եւ քիչ յետոյ՝ «ով ուրախացի ընդ յառաջագիմութիւն աշակերտիս» եւն:

Տողերուս եկամուտ ըլլալու ապացոյց է եւ այն հանդամանքը, որ անոնք կը բացակային Գրիգոր Նազիանզացւոյ ի Մելիտոս ճառին մէջ, որ հոս նմանութեան օրինակ ծառայած էր Ողբերգունին (Հմմտ. վերը, էջ 29):

Ներմուծողին ձեռքէն է նաեւ Ողբին վերնագիրը:

10. Մեր քննութեան արդիւնքը կրնանք ամփոփել այսպէս.

ա. Մովսէս Խորենացւոյ «Հայոց Պատմութեան» վերջը (Գ. 68) գտնուած Ողբը իւր բովանդակութեամբը անյարիր է տեղւոյն եւ ժամանակին. այն չի կրնար «Հայոց Պատմութեան» վերջարանը նկատուիլ:

բ. Բնական երեւոյթներու, քաղաքական եւ բարոյական կեանքի հանգամանքներու մասին հազորուած տեղեկութիւնները կ'ահնարկեն Ը. դարու երկրորդ կէսին (750—774) զիպուածները, այնպէս ինչպէս նկարագրած են զանոնք Սուտն-Գիոնեսիտս Թեւ-Մահրեցի եւ Ղեկնոր երէց: Ողբը գրուած է 774ին:

գ. Ողբը սկզբնաբար յօրինուած է իրրեւ վերջարանութիւն Ղեկնոր երէցի Պատմութեան առաջին մասին (զլ. 1Գ):

դ. Ողբին ոճը, բառամթերքը, ասութիւնները ունին մեծ նմանութիւն Ղեկնորի Պատմութեան հետ. ողբերգուն օգտուած է այն գրականութենէն որ գտնուած է Ղեկնորին ձեռքը: Ղեկնոր է Ողբին հեղինակը:

ե. Ողբս 790ին, երբ Ղեկնոր իւր Պատմութեան կցեց 774—790 տարիներու զիպուածները, տեղափոխուեցաւ Պատմութեան Բ. մասին վերջը, զոյգն փոփոխութիւններով:

զ. «Հովիւն» եւ «Հովուակիցը» հաւանօրէն կ'ահնարկեն Սիոն եւ Եսայի Կաթողիկոսները:

է. Մովսէս Խորենացւոյ «Հայոց Պատմութիւնը» լոյս տեսած է յրնթացս 790—810 տարիներուն: Որովհետեւ այն անաւարտ,

ուստի առանց վերջարանի մնացած էր, երկրորդ ձեռք մը Ղեկնորի Պատմութեան վերջարանը փոխադրած է «Հայոց Պատմութեան» վերջը: Այս փոխադրութեան ժամանակ մուծուած են մանր փոփոխութիւններ եւ յաւելուածներ, որոնք շօշափելի են:

Հ. Ն. ԱՅՆՆԵԱՆ



ՆՈՐԻՑ ԳՐԻԳՐԻՍ ԱՂԹԱԺԱՐԳՈՒ ՄԵՍԻՆ

«Արարատ» ամսագրի 1919 թուի Յունուար—Գեկտեմբեր միացեալ համարում¹ հրատարակել էինք «Գրիգորիս Աղթամարցի» վերնագրով յօդուածը, ամփոփելով կենսագրական—մատենագրական այն նորութիւնները, որ մինչ այդ անյայտ էին բանասիրութեան: Այժմ Հ. Ներսէս Ակինեանի մի նամակից (4 Յուլ. 1929 թ.) տեղեկանալով, որ նա դրադուած է Աղթամարցու կենսագրութեամբ եւ տողերի հրատարակութեամբ, կամենում ենք գործի լրութեան մասամբ օգնած լինելու համար, մատչելի դարձնել այն նիւթերը, որ յաջողուել է մեզ ձեռք բերել անցողակի կերպով՝ վերոյիշեալ յօդուածի հրատարակութիւնից յետոյ: Մեր ասելիքը վերաբերում է Աղթամարցու կենսագրութեան միայն եւ ոչ բանաստեղծական երկերի կամ նրանց զնահատութեան²:

1. Աղթամարցու մանկութեան եւ երիտասարդութեան մասին ոչինչ գիտենք, թէպէտ բաղմամբիւ են աւագ ժամանակակից գրիչներն իրենց յիշատակարաններով. նրա կեանքի հետ կապուած առաջին թուականներն իմանում ենք իւր իսկ գրուածներէրց, այն է 1515, 1519, 1523³. սրանց վերայ պէտք է աւելացնենք 1516 թուականը, երբ նա ծրել է Մարիիոս ճգնաւորի կեանքը ոտանաւորով. «Ի Գրիգորիս Աղթամարցւոյ արարեալ ոտանաւոր զվարս Մարիիոս սուրբ ճգնաւորին. Անձին եւ անբսկիզն հաւրէն»⁴: Ոտանաւորի վերջին տներն են.

¹ «Արարատ»ի վերջին համարն էր այդ, որից յետոյ դադարել է ամսագիրը:
² Ցաւում ենք, որ ձեռքի տակ չունինք Հ. Ակինեանի Աղթամարի Գաւազանադիրքն (Վիեննա, 1920) ու Աղթամարցուն նուիրած յօդուածը «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ (1915, էջ 18—64). դուցէ աւելորդ կը լինէին որոշ տեղեկութիւններ, որ տալիս ենք այստեղ:
³ Կ. Կոստանեան, Գրիգորիս Աղթամարցի եւ իւր տողերը, Թիֆլիս 1898, էր. 86, 91, 53:
⁴ Ձեռ. էջմ. Թ. 2672, 371ա, Գանձարան, զրուած Ստեփանոս Թոխաթցու ձեռքով 1609 թուին:

Ի թուականիս հայոց ինքն հարիւրի Կ. եւ Ե. տարի ի նմայ աւելի, եւ Գրիգորիս նրաւորս Ախթամարցի Ապիկարս տեսուչ եւ անյիշելի:

Ըզվարըս ճրգնութեան սուրբ Մարիիոսի Ոտնաչափ համառատ ի յաւարտ ամի, Ձի ընթերցմամբ սորայ զուարճանայք յօդի, Փասս երգեսցուք Փըրկչին ամենագաւրի:

Առ յոսս երջանիկ բարունապետի Գրիգորիոս անուն արթուն հրակազի, Գաջ հրոտոր անյաղթ փիլիսոփայի Եւ երիցս երանեալ մեծ վարժապետի:

Եւ որք եղանակէք ի մէջ հանդիսի Եւ յիշման արէք բզմեզ արժանի, Եւ ձեզ ողորմութիւն տեսնէն պարզելի ի սոսկալի աւուր մեծ դատաստանի:

Այստեղ յիշատակուած ենք տեսնում ոմն Գրիգորիոս բարունապետի, «քաջ հոետոր, անյաղթ փիլիսոփայի եւ երիցս երանեալ մեծ վարժապետի» անունը. երեք տարի յետոյ նա կրկին յիշում է սրա անունը Աստուածատուր Խթայեցուն նուիրած ոտանաւորի մէջ: Այս երկու ոտանաւորից պարզ է, որ նորա ուսուցիչն էր ոմն բարունապետ Գրիգոր, որին այնքան մեծ յարգանք է տաճում մեր տաղասաց «տեսուչ» Գրիգորիսը. սոյն բարունապետի հետ նոյն ենք համարում 1499 թուին գրուած մի մաշտոցի յիշատակարանի «մեծ հոետոր Գրիգոր»ը. ձեռագրի գրիչն է թումայ քահանայ, որդի Գրիգոր քահանայի եւ Քրման Խաթունի, հօրեղբայրն է «հոչակաւոր քարտուղար Թումայ կրօնաւորն, որ մականունն Կոռճով կոչի», բոլորն էլ յայտնի եւ նշանաւոր հանդիսացած Աղթամարի գրչութեան դպրոցի պատմութեան մէջ: Այս մաշտոցն էլ գրուած է «յաստուածարանակ կղզիս Աղթամար... ի ստոյգ եւ յրնտիր աւրինակէ, զոր սրբագրեաց եւ փարթամացոյց մեծ հոետորն Գրիգոր վարդապետն, քաջն եւ արին»⁵: Չունենայինք մենք Գրիգորիս Աղթամարցու յիշատակութիւնները «բարունապետ», «քաջ հոետոր», «մեծ վարժապետի» մասին, հակուած կը լինէինք Թումայ քահանայի յիշատակարանի «մեծ հոետորն Գրիգոր վարդապետն, քաջն եւ արին» նոյնացնել տաղասաց Գրիգորիսի հետ: Բայց երբ վերջինս նոյն անուաններով որակուած է իւր նոյնանուն ուսուցչին, պարզ է երկու Գրիգորներին նոյնութիւնը: Մենք աւելի կատակարանի «մեծ հոետորը» նոյն չէ տաղասացի հետ. յիշատակարանի Գրիգորի համար ասուած է, թէ «սրբագրեաց եւ փարթամացոյց» այս մաշտոցը. «փարթամացոյց» բառով ձեռագրի նկարագրութիւնն է ակնարկուած. համեմատելով սրա եւ Գրիգորիս

⁵ Ձեռ. էջմ., Թ. 1684: